

Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի 2006/117/ հրահանգ

Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքումն ստուգելու և վերահսկելու մասին

Պաշտոնական տեղեկագիր L 337 , 05/12/2006 թ., էջ 0021 - 0032

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 31(2) և 32-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը, որը, Պայմանագրի 31-րդ հոդվածին համապատասխան, կազմվել է Գիտատեխնիկական հարցերով կոմիտեի կողմից անդամ պետությունների փորձագետներից նշանակված մի խումբ անձանց եզրակացությունն ստանալուց և Տնտեսական ու սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո [1],

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը [2],

Քանի որ

1) ռադիոակտիվ թափոնների կամ աշխատած վառելիքի փոխադրման հետ կապված գործողությունների նկատմամբ կիրառվում են ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրմանը վերաբերող Համայնքի և միջազգային փաստաթղթերի մի շարք պահանջներ և պայմաններ, որոնց ներքո ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը հեռացվում կամ պահվում են նշանակման վայրի պետությունում,

2) ի լրումն նշված պահանջներին, աշխատողների և հանրության առողջության պաշտպանության նկատառումներից ելնելով անդամ պետությունների միջև և Համայնք ու Համայնքի տարածքից դուրս ռադիոակտիվ թափոնի կամ աշխատած վառելիքի առաքման նկատմամբ կիրառվում են նախնական թույլտվության պարտադիր և ընդհանուր համակարգ,

3) ինչպես նշված է «Անդամ պետություններում մետաղական նյութերի վերամշակման գործընթացում ռադիոակտիվ նյութերի առկայության ստուգման ու վերամշակման ազգային համակարգերի ստեղծման մասին» Խորհրդի 2002 թվականի մայիսի 22-ի որոշման մեջ [3],

կարևոր է նվազագույնի հասցնել վերամշակման ենթակա մետաղական նյութերում ռադիոակտիվ նյութերի առկայությունից առաջացող ճառագայթային ռիսկը,

4) «Անդամ պետությունների միջև, դեպի Համայնք և Համայնքի տարածքից դուրս ռադիոակտիվ թափոնների առաքումն ստուգելու և վերահսկելու մասին» Խորհրդի 1992 թվականի փետրվարի 3-ի 92/3/Եվրատոմ հրահանգով [4] ստեղծվեց Համայնքի՝ ռադիոակտիվ թափոնների առաքման առավել խիստ և նախնական թույլտվության ենթակա համակարգ, որի աշխատանքը բավականին գոհացուցիչ էր: Այնուամենայնիվ, այն պետք է փոփոխել ձեռք բերած փորձի հիման վրա, որպեսզի հստակեցվեն և ավելացվեն հասկացություններ ու սահմանումներ, հասցեագրվեն նախկինում չհասցեագրված իրավիճակները, պարզեցվեն անդամ պետությունների միջև ռադիոակտիվ թափոնների փոխադրման գործող ընթացակարգերը և երաշխավորվի համապատասխանությունը Համայնքի ու միջազգային փաստաթղթերի այլ դրույթների և, մասնավորապես, Աշխատած միջուկային վառելիքի կառավարման անվտանգության և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին միասնական կոնվենցիայի հետ (այսուհետ՝ «Համատեղ կոնվենցիա»), որին Համայնքը միացել է 2006 թվականի հունվարի 2-ին,

5) ՆՇՊՕ (Ներքին շուկայի ավելի պարզեցված օրենսդրություն) նախաձեռնության հինգերորդ փուլի շրջանակներում ստեղծվեց անդամ պետությունների ներկայացուցիչներից և կիրառողներից կազմված աշխատանքային խումբ՝ հասցեագրելու համար 92/3/Եվրատոմ հրահանգը կիրառողների արտահայտած մի շարք մտահոգությունները՝ միևնույն ժամանակ այն համահունչ դարձնելով միջազգային կանոնների և գործիքների հետ,

6) 92/3/Եվրատոմ հրահանգով սահմանված ընթացակարգը գործնականում կիրառվել է միայն աշխատած վառելիքի առաքման նկատմամբ, որը թեև չի նախատեսվում հետագա օգտագործման համար, սակայն նշված հրահանգի իմաստով համարվում է «ռադիոակտիվ թափոն»: Այն ճառագայթային տեսանկյունից հիմնավորված չէ, բացառությամբ հետագա վերամշակման համար նախատեսված աշխատած վառելիքի ստուգման և վերահսկման ընթացակարգի կիրառումը: Ուստի, նպատակահարմար է, որ սույն հրահանգով կարգավորվի աշխատած այն վառելիքի առաքումը, որը նախատեսված է հեռացման կամ վերամշակման համար,

7) յուրաքանչյուր անդամ պետություն ինքն է պատասխանատու իր իրավասության սահմաններում գտնվող ռադիոակտիվ թափոնների ու աշխատած վառելիքի կառավարման իր քաղաքականության ընտրության համար. որոշ անդամ պետություններ նախընտրում են

գրադվել աշխատած վառելիքի վերամշակմամբ, մյուսները ձգտում են վերջնականապես հեռացնել աշխատած վառելիքը՝ առանց հետագա օգտագործման մտադրությամբ: Սույն հրահանգը, ուստի, չպետք է հակասի անդամ պետությունների՝ վերամշակման համար նախատեսված աշխատած վառելիքի արտահանման իրավունքներին, և սույն հրահանգի ոչ մի դրույթով չպետք է նախատեսվի պահանջ այն մասին, որ նշանակման վայրի անդամ պետությունը պարտավոր է ընդունել առաքված ռադիոակտիվ թափոններն ու աշխատած վառելիքը վերջնական մաքրման կամ հեռացման համար, բացառությամբ եթե դրանք չպետք է նորից առաքվեն այլ պետություն: Ռադիոակտիվ թափոնների ու աշխատած վառելիքի առաքումը կարող է մերժվել սույն հրահանգով սահմանված չափանիշների հիման վրա,

8) գործող ընթացակարգի պարզեցումը չպետք է խոչընդոտի ռադիոակտիվ թափոնների այն առաքումը մերժելու կամ դրա հետ կապված պայմաններ սահմանելու անդամ պետությունների գործող իրավունքներին, որոնք ենթակա են դրանց թույլտվության: Առարկությունները չպետք է կամայական լինեն և պետք է հիմնավորվեն ազգային, Համայնքի կամ միջազգային համապատասխան իրավունքի հիման վրա: Սույն հրահանգը չպետք է հակասի միջազգային իրավունքով ստանձնած իրավունքներին և պարտավորություններին և, մասնավորապես, միջազգային իրավունքով նախատեսված կարգով նավերով և օդանավերով կատարվող ծովագնացության, գետագնացության և օդագնացության իրավունքների ու ազատությունների իրականացմանը,

9) նշանակման վայրի կամ տարանցման անդամ պետության՝ ռադիոակտիվ թափոնների ու աշխատած վառելիքի առաքման համար համաձայնություն տալու ավտոմատ ընթացակարգը մերժելու իրավունքն ստեղծում է անհիմն վարչական բեռ և անհստակություն: Նշանակման վայրի և տարանցման պետությունների մարմինների կողմից հայտի ստացման պարտադիր հաստատումը, ինչպես նաև համաձայնության տրամադրման ժամկետի երկարաձգումը ենթադրում է հստակության բարձր աստիճանով լռելյան հաստատում,

10) սույն հրահանգի իմաստով առաքման «թույլտվությունները» չպետք է փոխարինեն առաքման ցանկացած հատուկ ազգային պահանջներին, ինչպես օրինակ՝ փոխադրման լիցենզիաները,

11) ռադիոակտիվ թափոններից առաջացող վտանգներից մարդու առողջությունն ու շրջակա միջավայրը պաշտպանելու համար պետք է հաշվի առնվեն Համայնքի տարածքից դուրս ի

հայտ եկող վտանգները: Համայնքի տարածքից դուրս բերվող ռադիոակտիվ թափոնների ու աշխատած վառելիքի դեպքում նշանակման վայրի երրորդ պետությանը ոչ միայն պետք է տեղեկացվի առաքման, այլ նաև այն պետք է տա իր համաձայնությունը,

12) նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինները պետք է համագործակցեն ներգրավված մյուս իրավասու մարմինների հետ և կապ հաստատեն վերջիններիս հետ՝ անհարկի ձգձգումներից խուսափելու և սույն հրահանգով սահմանված համաձայնության ընթացակարգի բնականոն իրականացումն ապահովելու նպատակով,

13) այն պահանջը, որ առաքման համար պատասխանատու անձը առաքում չիրականացնելու դեպքում ձեռնարկի անվտանգության ուղղիչ միջոցներ, չպետք է խոչընդոտի ազգային մակարդակով անդամ պետությունների կողմից սահմանված մեխանիզմների կիրառմանը,

14) այն պահանջը, որ առաքում չիրականացնելու արդյունքում առաջացող ծախսերը կրում է անձը, չպետք է խոչընդոտի ազգային մակարդակով անդամ պետությունների կողմից սահմանված մեխանիզմների կամ առաքման գործընթացում ներգրավված անձի և ցանկացած այլ անձի միջև ցանկացած պայմանագրային պայմանավորվածությունների կիրառմանը,

15) քանի որ ռադիոակտիվ թափոնը, այնքանով, որքանով համահունչ է նշված նյութերի անվտանգ կառավարման հետ, պետք է հեռացվի այն անդամ պետությունում, որտեղ այն առաջացել է, ընդունված է, որ անդամ պետությունները պետք է նպաստեն միմյանց հետ համաձայնությունների կնքմանը, որպեսզի հնարավոր լինի անվտանգ և արդյունավետ կերպով կառավարել այն անդամ պետություններից ստացվող ռադիոակտիվ թափոնները կամ աշխատած վառելիքը, որտեղ դրանք արտադրվում են փոքր քանակություններով, և որտեղ համապատասխան հարմարությունների ստեղծումը հիմնավորված չի լինի ճառագայթային տեսանկյունից,

16) եթե երրորդ երկրի բեռն ստացողի և երրորդ երկրի անձի միջև ձեռք է բերվում համաձայնություն՝ Համատեղ կոնվենցիայի համաձայն, ապա նույն պայմանավորվածությունը կարող է օգտագործվել սույն հրահանգի իմաստով,

17) սույն հրահանգի իմաստով և նախկին փորձի հիման վրա նպատակահարմար է հարմարեցնել գործող օրինակելի փաստաթուղթը: Հստակության նկատառումներից ելնելով՝ մինչև սույն հրահանգի փոխատեղման ամսաթիվը պետք է սահմանվի նոր օրինակելի փաստաթուղթ մշակելու պարտավորությունը: Այնուամենայնիվ, եթե այս

վերջնաժամկետը չի պահվում, անցումային դրույթներով պետք է նախատեսվի գործող օրինակելի փաստաթղթի օգտագործումը: Ավելին, լեզուների օգտագործման հետ կապված հստակ կանոններով ապահովվում է իրավական համապատասխանություն և կանխվում են անհարկի ձգձգումները,

18) անդամ պետություններից Հանձնաժողով և Հանձնաժողովից Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ և Տնտեսական ու սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեին ներկայացվող պարբերական զեկույցներում տրվում է Համայնքի տարածքում տրամադրված թույլտվությունների մասին ընդհանուր պատկերացում և ներկայացվում է գործնականում անդամ պետությունների կողմից հանդիպած հնարավոր բարդություններն ու տրված լուծումները,

19) իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից աշխատողների և հանրության առողջության պաշտպանության համար անվտանգության հիմնական ստանդարտները սահմանող՝ Խորհրդի 1996 թվականի մայիսի 13-ի 96/29/Եվրատոմ հրահանգը [5] կիրառվում է, մասնավորապես, Համայնքից ռադիոակտիվ նյութերի փոխադրման, ներմուծման ու արտահանման նկատմամբ և նախատեսում է իոնացնող ճառագայթման հետ կապված գործելակերպերի մասին զեկույցների ներկայացման և թույլտվության համակարգ: Նշված դրույթները, ուստի, կարևոր են սույն հրահանգով կարգավորվող ոլորտի համար,

20) նշվածի լույսի ներքո անհրաժեշտ է հստակության նկատառումներից ելնելով ուժը կորցրած ճանաչել և փոխարինել 92/3/Եվրատոմ հրահանգը: Սույն հրահանգը չպետք է խոչընդոտի ազգային իրավունքում փոխատեղման և ուժը կորցրած հրահանգի կիրարկման վերջնաժամկետների հետ կապված անդամ պետությունների պարտավորություններին,

21) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ պարբերությանը համապատասխան [6] խրախուսվում է, որ անդամ պետություններն իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմեն սույն հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակեն դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ՆԱԽՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

1. Սույն հրահանգով սահմանվում է ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի անդրսահմանային առաքումն ստուգելու և վերահսկելու Համայնքի համակարգ՝ երաշխավորելու համար բնակչության պատշաճ պաշտպանություն:
2. Սույն հրահանգը կիրառվում է ռադիոակտիվ թափոնների կամ աշխատած վառելիքի անդրսահմանային առաքման նկատմամբ, երբ՝
 - ա) ծագման կամ նշանակման վայրի պետությունը կամ տարանցման ցանկացած պետություն Համայնքի անդամ պետությունն է և
 - բ) բեռի քանակությունները և կոնցենտրացիան գերազանցում է 96/29/Եվրատոմ հրահանգի 3(2) հոդվածի (ա) և (բ) կետերով սահմանված մակարդակները:
3. Սույն հրահանգը չի կիրառվում ռադիոակտիվ ճառագայթման աղբյուրների մատակարարին կամ արտադրողին չչահագործվող աղբյուրների մատակարարման կամ ճանաչված ատոմային հարմարությունների նկատմամբ:
4. Սույն հրահանգը չի կիրառվում հետագա օգտագործման համար վերամշակման միջոցով վերականգնված ռադիոակտիվ նյութերի առաքում նկատմամբ:
5. Սույն հրահանգը չի կիրառվում բնական, մարդու կենսագործունեությունից չառաջացող ռադիոակտիվ նյութ պարունակող թափոնների անդրսահմանային առաքման նկատմամբ:
6. Սույն հրահանգը չի հակասում միջազգային իրավունքի ներքո ստանձնած իրավունքներին և պարտավորություններին:

Հոդված 2

Մշակման և վերամշակման համար կատարված առաքումը

Սույն հրահանգը չի ներառում այն անդամ պետության կամ անդամ պետությունում գործող այն ընկերության իրավունքին, որոնց

ա) պետք է առաքվի ռադիոակտիվ թափոնը՝ մշակման համար կամ

բ) պետք է առաքվի այլ նյութ ռադիոակտիվ նյութի վերականգնման համար՝

մաքրումից հետո ռադիոակտիվ թափոնը ծագման պետություն վերադարձնելու նպատակով: Այն չի ներառում այն անդամ պետության կամ այդ անդամ պետությունում գործող այն ընկերության իրավունքի վրա, որին առաքվում է աշխատած վառելիքը վերամշակման համար, որպեսզի վերադարձվի վերամշակում անցած վերականգնված ռադիոակտիվ թափոնի ծագման պետություն:

Հոդված 3

Վերամշակման ուղարկելու համար աշխատած վառելիքի անդրսահմանային առաքումը

Չհակասելով յուրաքանչյուր անդամ պետության աշխատած վառելիքի ցիկլի քաղաքականության իրավասությանը՝ սույն հրահանգը չի ներառում վերամշակման համար աշխատած վառելիքի արտահանման անդամ պետության իրավասությանը՝ հաշվի առնելով ընդհանուր միջուկային շուկայի, մասնավորապես ապրանքների ազատ առևտրի սկզբունքները: Նշված փոխադրումն ու արտահանումն ստուգվում և վերահսկվում է սույն հրահանգով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 4

Չթույլատրված առաքման դեպքում վերաառաքումը և չգրանցված ռադիոակտիվ թափոնը

Սույն Հրահանգը չի ներառում ռադիոակտիվ թափոնի ծագման պետության անվտանգ վերադարձնելու անդամ պետության իրավունքին՝

ա) սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ մտնող, սակայն սույն հրահանգին համապատասխան պատշաճ ձևով չթույլատրված ռադիոակտիվ թափոնի և աշխատած վառելիքի առաքումը և

բ) ռադիոակտիվ նյութերով աղտոտված թափոն կամ ռադիոակտիվ աղբյուր հանդիսացող նյութ, եթե այս նյութը ծագման պետության կողմից չի հայտարարվել ռադիոակտիվ թափոն:

Հոդված 5

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1. «ռադիոակտիվ թափոն» նշանակում է գազային, հեղուկ կամ պինդ վիճակում ռադիոակտիվ նյութ, որը պիտանի չէ ծագման և նշանակման վայրի պետությունների կամ այն իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից հետագա օգտագործման համար, որոնց կայացրած որոշումն ընդունելի է նշված երկրների կողմից, և որը կարգավորող մարմնի կողմից, ծագման ու նշանակման վայրի պետությունների օրենսդրական և կարգավորող շրջանակի ներքո, ստուգվում է որպես թափոն.

2. «աշխատած վառելիք» նշանակում է ատոմային վառելիք, որը ճառագայթման է ենթարկվել ատոմային ռեակտորի ակտիվ գոտում և ընդամիշտ հեռացվել է դրանից. աշխատած վառելիքը կարող է համարվել որպես օգտակար ռեսուրս, որը կարող է վերամշակվել, կամ որը ենթակա է վերջնական հեռացման առանց հետագա օգտագործման հնարավորության և համարվում է որպես ռադիոակտիվ թափոն.

3. «վերամշակում» նշանակում է պրոցես կամ ֆունկցիա, որի նպատակն է հեռացնել ռադիոակտիվ իզոտոպերը աշխատած վառելիքից՝ վառելիքը հետագայում օգտագործելու նպատակով.

4. «առաքում» նշանակում է ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը ծագման երկրից կամ անդամ պետությունից նշանակման վայրի երկիր կամ անդամ պետություն դուրս բերելու գործողությունների ամբողջություն.

5. «ներհամայնքային առաքում» նշանակում է իրականացված առաքում, երբ ծագման երկիրը և նշանակման երկիրն անդամ պետություններն են.

6. «համայնքից դուրս կատարվող առաքում» նշանակում է իրականացված առաքում, երբ ծագման երկիրը և (կամ) նշանակման երկիրը երրորդ երկրներն են.
7. «հեռացում» նշանակում է ռադիոակտիվ թափոնի կամ աշխատած վառելիքի տեղադրումը թույլատրված վայրում՝ առանց կրկին օգտագործելու մտադրության.
8. «պահում» նշանակում է ռադիոակտիվ թափոնի կամ աշխատած վառելիքի պահում այնպիսի վայրում, որը նախատեսում է դրա կապարակնքումը՝ կրկին օգտագործելու մտադրությամբ.
9. «անձ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը նախքան ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքն առաքելը պատասխանատու է կիրառելի ազգային իրավունքի համաձայն նշված նյութերի համար և պլանավորում է դրանք առաքել բեռն ստացողին.
10. «բեռն ստացող» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որին առաքվում է ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը.
11. «ծագման երկիր կամ անդամ պետություն» և «նշանակման վայրի երկիր կամ անդամ պետություն» համապատասխանաբար նշանակում են ցանկացած երկիր կամ անդամ պետություն, որտեղից պլանավորվում է իրականացվել կամ իրականացվում է առաքում և ցանկացած երկիր կամ անդամ պետություն, ուր պլանավորվում է իրականացվել կամ իրականացվում է առաքում.
12. «տարանցման երկիր կամ անդամ պետություն» նշանակում է ցանկացած ծագման երկրից կամ անդամ պետությունից կամ նշանակման վայրի երկրից կամ անդամ պետությունից բացի այլ երկիր կամ անդամ պետություն, որի տարածքում պլանավորվում է իրականացվել կամ իրականացվում է առաքում.
13. «իրավասու մարմիններ» նշանակում է ցանկացած մարմին, որը ծագման, տարանցման կամ նշանակման վայրի երկրների իրավունքի կամ կանոնակարգերի համաձայն, իրավասու են իրականացնելու ռադիոակտիվ թափոնի կամ աշխատած վառելիքի առաքման նկատմամբ ստուգում.
14. «պաշտպանվող աղբյուր» ունի 96/29/Եվրատոմ հրահանգով դրան տրված իմաստ և ներառում է, հարկ եղած դեպքում, ռադիոակտիվ նյութը փակող պատիճը՝ որպես աղբյուրի անբաժան մաս.

15. «չօգտագործվող աղբյուր» նշանակում է պաշտպանվող աղբյուր, որն այլևս չի օգտագործվում կամ չի նախատեսվում օգտագործման համար, որի իրականացման համար շնորհվել է թույլտվություն.

16. «ճանաչված ատոմային հարմարություն» նշանակում է տվյալ երկրի իրավասու մարմինների կողմից թույլատրված՝ երկրի տարածքում տեղակայված հարմարություն, որը նախատեսված է պաշտպանվող աղբյուրների երկարաժամկետ պահման կամ հեռացան համար՝ ազգային իրավունքին համապատասխան կամ ազգային իրավունքի համաձայն պատշաճ կերպով թույլատրված հարմարություն՝ պաշտպանվող աղբյուրների միջանկյալ պահման համար.

17. «պատշաճ կերպով լրացված հայտ» նշանակում է օրինակելի փաստաթուղթ, որը համապատասխանում է բոլոր պահանջներին՝ 17-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԱՔՈՒՄՆԵՐԸ

Հոդված 6

Առաքման թույլտվություն ստանալու համար հայտ ներկայացնելը

1. Անձը, ով պլանավորում է իրականացնել ռադիոակտիվ թափոնի կամ աշխատած վառելիքի ներհամայնքային առաքում կամ հնարավորություն ընձեռել իրականացվելիք առաքման համար, ներկայացնում է ծագման անդամ պետության իրավասու մարմիններին պատշաճ կերպով լրացված հայտ՝ թույլտվություն ստանալու նպատակով:

2. Հայտը կարող է ուղարկվել մեկից ավելի առաքումների համար՝ պայմանով, որ

ա) ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը, որի մասով ներկայացվել է հայտ, էականորեն ունենա նույն ֆիզիկական, քիմիական և ռադիոակտիվ առանձնահատկությունները և

բ) առաքումներն իրականացվեն նույն անձից նույն բեռն ստացողին և ներգրավված լինեն նույն իրավասու մարմինները.

գ) եթե առաքումն իրականացվում է երրորդ երկրներից տարանցման միջոցով, նման տարանցումը կատարվում է Համայնք մուտքի և (կամ) ելքի նույն ուղեկալի և համապատասխան երրորդ երկրի կամ երկրների նույն ուղեկալի (ուղեկալների) միջոցով, եթե այլ համաձայնություն ձեռք չի բերվել համապատասխան իրավասու մարմինների միջև:

Հոդված 7

Իրավասու մարմիններին հայտի փոխանցումը

1. Ծագման անդամ պետության իրավասու մարմինները պետք է ուղարկեն 6-րդ հոդվածում նշված պատշաճ կերպով լրացված հայտը նշանակման վայրի անդամ պետության և, առկայության դեպքում, տարանցման անդամ պետությունների իրավասու մարմիններին՝ նրանց համաձայնությունն ստանալու նպատակով:

2. Ընդգրկված անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն հրահանգով կարգավորվող

առաքումներին վերաբերող բոլոր տեղեկություններն օգտագործվեն զգուշությամբ և պաշտպանվեն ցանկացած անօրինական օգտագործումից:

Հոդված 8

Ստացման հաստատումը և տեղեկություն ստանալու հարցումը

1. Հայտն ստանալուց հետո 20 օրվա ընթացքում նշանակման վայրի և տարանցման անդամ պետության իրավասու մարմիններն ստուգում են, որ հայտը լրացված լինի պատշաճ կերպով՝ 5(17) հոդվածի իմաստով:

2. Եթե հայտը լրացված է պատշաճ կերպով, ապա նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմիններն ուղարկում են ստացման հաստատում ծագման անդամ պետության իրավասու մարմիններին և պատճենն ուղարկում են համապատասխան իրավասու մարմիններին ոչ ուշ, քան 1-ին պարբերությամբ սահմանված 20 օրը լրանալուց հետո 10 օրվա ընթացքում:

3. Եթե համապատասխան անդամ պետությունների իրավասու մարմիններից մեկը համարում է, որ հայտը լրացված չէ պատշաճ կերպով, ապա այն դիմում է ծագման անդամ պետության իրավասու մարմիններին տրամադրել պակասող տեղեկությունները և այս մասին տեղեկացնում է այլ իրավասու մարմիններին: Տեղեկություն ստանալու հարցումը պետք է կատարվի 1-ին պարբերությամբ սահմանված ժամկետի ավարտից ոչ ուշ:

Ծագման անդամ պետության իրավասու մարմինները պետք է փոխանցեն հարցված տեղեկությունները համապատասխան իրավասու մարմիններին:

Պակասող տեղեկություններն ստանալուց հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում և 1-ին պարբերությամբ սահմանված 20 օրյա ժամկետի ավարտից հետո ոչ շուտ, նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինները պետք է ուղարկեն ստացման հաստատում ծագման անդամ պետության իրավասու մարմիններին և պատճենն ուղարկեն համապատասխան այլ իրավասու մարմիններին:

4. Ստացման հաստատում տալու համար 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված ժամկետները կարող են կրճատվել, եթե նշանակման վայրի և տարանցման պետության իրավասու մարմինները գտնում են, որ հայտը լրացված է պատշաճ կերպով:

Հոդված 9

Համաձայնությունը և մերժումը

1. Ստացման հաստատման ամսաթվից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում համապատասխան բոլոր անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է ծանուցեն ծագման անդամ պետության իրավասու մարմիններին իրենց համաձայնության կամ իրենց համաձայնությունը տալու համար անհրաժեշտ պայմանների կամ համաձայնություն տալը մերժելու մասին:

Այնուամենայնիվ, նշանակման վայրի կամ տարանցման ցանկացած անդամ պետության իրավասու մարմին կարող է 1-ին ենթապարբերության մեջ նշված ժամկետից բացի խնդրել մինչև մեկ ամիս լրացուցիչ ժամկետ, որպեսզի հրապարակի իր դիրքորոշումը:

2. Եթե մինչև 1-ին պարբերությամբ սահմանված ժամկետների լրանալը նշանակման վայրի և (կամ) նախատեսված տարանցման անդամ պետության իրավասու մարմիններից պատասխան չի ստացվում, ապա համարվում է, որ նշված երկրները տվել են իրենց համաձայնությունը համապատասխան առաքման համար:

3. Անդամ պետությունները պետք է հիմնավորեն իրենց համաձայնությունը տալը մերժելը կամ իրենց համաձայնությունը տալու պայմանները, որը հիմնված է՝

ա) տարանցման անդամ պետության դեպքում ռադիոակտիվ նյութի փոխադրման նկատմամբ կիրառվող համապատասխան ազգային, Համայնքի կամ միջազգային օրենսդրության վրա.

բ) նշանակման վայրի անդամ պետության դեպքում ռադիոակտիվ թափոնի կամ աշխատած վառելիքի կառավարման նկատմամբ կիրառվող համապատասխան օրենսդրության կամ ռադիոակտիվ նյութի փոխադրման նկատմամբ կիրառվող համապատասխան ազգային, Համայնքի կամ միջազգային օրենսդրության վրա:

Անդամ պետության իրավասու մարմինների կողմից կիրառվող ցանկացած պայման լինի այն տարանցման, թե նշանակման վայրի պետություն, չի կարող լինել ավելի խիստ, քան նշված անդամ պետություններում նման առաքումների նկատմամբ կիրառվող պայմաններն են:

4. Անդամ պետությունը կան պետությունները, որոնք տվել են իրենց համաձայնությունը տարանցման միջոցով առաքում կատարելու համար, չեն կարող իրենց համաձայնությունը չտալ վերաառաքում կատարելու համար հետևյալ դեպքերում՝

ա) երբ նախնական համաձայնությունը վերաբերում է այն նյութին, որն առաքվել է մշակման կամ վերամշակման նպատակներով, եթե վերաառաքումը վերաբերում է ռադիոակտիվ թափոնին կամ մշակումից կամ վերամշակումից հետո սկզբնական նյութին համարժեք այլ արտադրանքին, և երբ համապատասխան օրենսդրությունը հարգվում է.

բ) 12-րդ հոդվածով նկարագրված հանգամանքների ներքո, եթե վերաառաքումն իրականացվում է նույն պայմաններով և նույն մասնագրերով:

5. Մեկ այլ անդամ պետության իրավասու մարմինների կողմից անհարկի ձգձգումների և (կամ) համագործակցության բացակայության մասին զեկուցվում է Հանձնաժողովին:

Հոդված 10

Առաքման թույլտվությունը

1. Եթե առաքման համար անհրաժեշտ համաձայնությունները ձեռք են բերվում, ապա ծագման անդամ պետության իրավասու մարմիններն իրավունք են ունենում թույլատրելու անձին իրականացնել առաքում և այս մասին տեղեկացնում են համապատասխանաբար նշանակման և ցանկացած անդամ պետության կամ տարանցման երրորդ երկրի իրավասու մարմիններին:

2. Առաջին պարբերության մեջ նշվող թույլտվությունը չպետք է որևէ կերպ ազդի առաքման մեջ ներգրավված անձի, փոխադրողների, սեփականատիրոջ, բեռն ստացողի կամ ցանկացած այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի պատասխանատվության վրա:

3. Մեկ թույլտվությունը կարող է տրվել մեկից ավելի առաքումների մասով, եթե բավարարվում են 6(2) հոդվածով սահմանված պայմանները:

4. Ցանկացած թույլտվության գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել:

Գործողության ժամկետ սահմանելիս անդամ պետությունները հաշվի են առնում նշանակման վայրի կամ տարանցման անդամ պետությունների կողմից տրված համաձայնության մեջ սահմանված ցանկացած պայման:

Հոդված 11

Առաքման ստացման հաստատումը

1. Առաքումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում բեռն ստացողը պետք է ուղարկի նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմիններին յուրաքանչյուր խմբաքանակն ստանալու մասին հաստատումը:
2. Նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինները պետք է ուղարկեն առաքման ստացման հաստատման պատճենները ծագման անդամ պետությանը և տարանցման ցանկացած անդամ պետությանը կամ երրորդ երկրին:
3. Ծագման անդամ պետության իրավասու մարմինները պետք է փոխանցեն առաքման ստացման հաստատման պատճեն սկզբնական ստացողին:

Հոդված 12

Առաքումը չիրականացնելը

1. Նշանակման, ծագման երկրի կամ տարանցման անդամ պետությունը կարող է որոշել չիրականացնել առաքում, եթե առաքման պայմանները այլևս չեն պահպանվում սույն հրահանգին համապատասխան կամ չեն համապատասխանում սույն հրահանգի համաձայն տրամադրված թույլտվություններին կամ համաձայնություններին:

Նման անդամ պետությունը պետք է առաքման մեջ ներգրավված մյուս անդամ պետություններին անմիջապես տեղեկացնի սույն որոշումը կայացնելու մասին:

2. Եթե առաքում չի կարող իրականացվել, կամ եթե առաքման պայմաններն այլևս չեն պահպանվում սույն հրահանգին համապատասխան, ապա ծագման անդամ պետության իրավասու մարմիններն ապահովում են, որ անձը հետ վերցնի համապատասխան ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը, քանի դեռ անվտանգ այլ միջոցառումներ չեն իրականացվել: Նշված իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ առաքման համար պատասխանատու անձը, հարկ եղած դեպքում, ձեռնարկի անվտանգության ուղղիչ միջոցներ:
3. Եթե առաքումը հնարավոր չէ կամ չպետք է իրականացվի, ապա դրանից առաջացող ծախսերը պետք է կրի անձը:

ՀԱՄԱՅՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԱՔՈՒՄՆԵՐԸ

Հոդված 13

Ներմուծումը Համայնք

1. Եթե սույն հրահանգի գործողության շրջանակներում ընկնող ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը պետք է մուտք գործի Համայնք երրորդ երկրից և նշանակման վայրի պետությունն անդամ պետությունն է, ապա բեռն ստացողը տվյալ անդամ պետության իրավասու մարմիններին պետք է ներկայացնի թույլտվություն ստանալու հայտ: Հայտը կարող է ուղարկվել մեկից ավելի առաքումների մասով՝ 6(2) հոդվածով սահմանված պայմանների համաձայն:

Հայտի մեջ պետք է ներառվի ապացույց այն մասին, որ բեռն ստացողը երրորդ երկրում տնտեսական գործունեություն իրականացնող և տվյալ երրորդ երկրի իրավասու մարմինների կողմից ընդունված անձի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել առ այն, որ անձը պարտավորվում է հետ վերցնել ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը, եթե առաքումը չիրականացվի սույն Հրահանգին համապատասխան՝ սույն հոդվածի 5-րդ պարբերությամբ նախատեսված կարգով:

2. Նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինները պետք է ուղարկեն 1-ին պարբերության մեջ նշված հայտը տարանցման անդամ պետության իրավասու մարմիններին, եթե այդպիսիք առկա են, համաձայնություն ստանալու նպատակով:

Կիրառվում են 8-րդ և 9-րդ հոդվածները:

3. Եթե առաքման համար անհրաժեշտ համաձայնությունները ձեռք են բերվում, ապա նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինները իրավունք են ունենում թույլատրելու բեռն ստացողին իրականացնել առաքում և այդ մասին տեղեկացնում են համապատասխանաբար ծագման կամ տարանցման ցանկացած անդամ պետության կամ երրորդ երկրի իրավասու մարմիններին:

Կիրառվում է 10 (2), (3) և (4) հոդվածը:

4. Առաքումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում բեռն ստացողը պետք է ուղարկի նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմիններին յուրաքանչյուր

խմբաքանակն ստանալու մասին հաստատումը: Նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինները պետք է ուղարկեն հաստատման պատճենները ծագման երկրին և տարանցման ցանկացած անդամ պետությանը կամ երրորդ երկրին:

5. Նշանակման վայրի անդամ պետությունը կամ տարանցման ցանկացած անդամ պետություն կարող է որոշել չիրականացնել առաքում, եթե առաքման պայմաններն այլևս չեն պահպանվում սույն հրահանգին համապատասխան կամ չեն համապատասխանում սույն հրահանգի համաձայն տրամադրված թույլտվություններին կամ համաձայնություններին: Նման անդամ պետությունը պետք է ծագման պետության իրավասու մարմիններին անմիջապես տեղեկացնի սույն որոշումը կայացնելու մասին:

6. Եթե առաքումը հնարավոր չէ կամ չպետք է իրականացվի, ապա դրանից առաջացող ծախսերը կրում է բեռն ստացողը:

Հոդված 14

Տարանցումը Համայնքի տարածքով

1. Եթե ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը պետք է մուտք գործեն Համայնք երրորդ երկրից և նշանակման վայրի պետությունն անդամ պետությունը չէ, ապա իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը պատասխանատու է այն անդամ պետության տարածքում առաքումը կառավարելու համար, որի մաքսային տարածքով ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքն առաջին անգամ մուտք են գործում Համայնք (տարանցման առաջին անդամ պետությունը), պետք է ներկայացնեն տվյալ անդամ պետության իրավասու մարմիններին թույլտվություն ստանալու հայտ: Հայտը կարող է ուղարկվել մեկից ավելի առաքումների մասով՝ 6(2) հոդվածով սահմանված պայմանների համաձայն:

Հայտի մեջ պետք է ներառվի ապացույց այն մասին, որ երրորդ երկրում տնտեսական գործունեություն իրականացնող և տվյալ երրորդ երկրի իրավասու մարմինների կողմից ընդունված անձի հետ բեռն ստացողը պայմանավորվածություն է ձեռք բերել առ այն, որ անձը պարտավորվում է հետ վերցնել ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը, եթե առաքումը չիրականացվի սույն Հրահանգին համապատասխան՝ սույն հոդվածի 5-րդ պարբերությամբ նախատեսված կարգով:

2. Տարանցման առաջին անդամ պետության իրավասու մարմինները պետք է ուղարկեն 1-ին պարբերության մեջ նշված հայտը տարանցման մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններին, եթե այդպիսիք առկա են, համաձայնություն ստանալու նպատակով:

Կիրառվում են 8-րդ և 9-րդ հոդվածները:

3. Եթե առաքման համար անհրաժեշտ համաձայնությունները ձեռք են բերվում, ապա նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմիններն իրավունք են ունենում 1-ին պարբերության մեջ նշված իրավասու անձին թույլատրելու իրականացնել առաքում և այդ մասին տեղեկացնում են համապատասխանաբար ծագման կամ տարանցման ցանկացած մյուս անդամ պետության կամ երրորդ երկրի իրավասու մարմիններին:

Կիրառվում է 10(2), (3) և (4) հոդվածը:

4. Առաջին պարբերության մեջ նշված իրավասու անձը պետք է ծանուցի տարանցման առաջին անդամ պետությանը, որ ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը հասել են երրորդ երկրում նշանակման վայր ժամանման ամսաթվից 15 օրվա ընթացքում և նշում է Համայնքում վերջին մաքսային սահմանը, որով անցել է բեռը:

Բեռն ստացողը պետք է հիմնավորի իր ծանուցումը հայտարարագրով կամ հավաստագրով՝ նշելով, որ ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը հասել են իրենց նշանակման վայրը, ինչպես նաև երրորդ երկրում այն մաքսային սահմանը, որով բեռն անցել է:

5. Տարանցման երկրի անդամ պետությունը կարող է որոշել չիրականացնել առաքում, եթե առաքման պայմանները այլևս չեն պահպանվում սույն հրահանգին համապատասխան կամ չեն համապատասխանում սույն հրահանգի համաձայն տրամադրված թույլտվություններին կամ համաձայնություններին: Նման անդամ պետությունը պետք է ծագման պետության իրավասու մարմիններին անմիջապես տեղեկացնի սույն որոշումը կայացնելու մասին: Եթե առաքումը հնարավոր չէ կամ չպետք է իրականացվի, ապա դրանից առաջացող ծախսերը կրում է 1-ին պարբերության մեջ նշված պատասխանատու անձը:

Հոդված 15

Արտահանումը Համայնքի տարածքից դուրս

1. Եթե ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը պետք է արտահանվեն Համայնքից երրորդ երկիր, ապա անձը հայտ է ներկայացնում ծագման անդամ պետության

իրավասու մարմիններին՝ թույլտվություն ստանալու նպատակով: Հայտը կարող է ուղարկվել մեկից ավելի առաքումների մասով՝ 6(2) հոդվածով սահմանված պայմանների համաձայն:

2. Ծագման անդամ պետության իրավասու մարմինները պետք է՝

ա) ծանուցեն նախատեսվող առաքման մասին նշանակման վայրի պետության իրավասու մարմիններին և ստանան վերջիններիս համաձայնությունները և

բ) ուղարկեն 1-ին պարբերության մեջ նշված հայտը տարանցման անդամ պետությունների իրավասու մարմիններից՝ համաձայնություն ստանալու նպատակով, եթե այդպիսին առկա են:

Կիրառվում է 8-րդ հոդվածը:

3. Եթե առաքման համար անհրաժեշտ համաձայնությունները ձեռք են բերվում, ապա ծագման անդամ պետության իրավասու մարմիններն իրավունք են ունենում թույլատրելու անձին իրականացնել առաքում և այդ մասին տեղեկացնում են համապատասխանաբար նշանակման վայրի երրորդ երկրի և տարանցման ցանկացած անդամ պետության կամ երրորդ երկրի իրավասու մարմիններին:

Կիրառվում է 10 (2), (3) և (4) հոդվածը:

4. Անձը պետք է ծանուցի ծագման անդամ պետության իրավասու մարմիններին, որ ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը հասել են երրորդ երկրում իրենց նշանակման վայր ժամանման ամսաթվից 15 օրվա ընթացքում և նշի Համայնքում վերջին մաքսային սահմանը, որով անցել է բեռը:

Բեռն ստացողը պետք է հիմնավորի իր ծանուցումը հայտարարագրով կամ հավաստագրով՝ նշելով, որ ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը հասել են իրենց նշանակման վայրը, ինչպես նաև երրորդ երկրում այն մաքսային սահմանը, որով բեռն անցել է:

5. Ծագման անդամ պետությունը կամ տարանցման ցանկացած անդամ պետություն կարող են որոշել չիրականացնել առաքում, եթե առաքման պայմաններն այլևս չեն պահպանվում սույն հրահանգին համապատասխան կամ չեն համապատասխանում սույն հրահանգի համաձայն տրամադրված թույլտվություններին կամ համաձայնություններին: Տարանցման նման անդամ պետությունը պետք է ծագման անդամ պետության իրավասու մարմիններին անմիջապես տեղեկացնի սույն որոշումը կայացնելու մասին:

Կիրառվում է 12(2) և (3) հոդվածը:

Արտահանումների արգելումը

1. Անդամ պետությունների իրավասու մարմինները չպետք է թույլ տալ իրականացնել առաքում՝

ա) հարավային լայնության 60 աստիճանում գտնվող նշանակման վայր կամ

բ) այնպիսի պետություն, որը մի կողմից Աֆրիկյան, Կարիբյան և Խաղաղ օվկիանոսի ավազանի երկրների անդամների և մյուս կողմից Եվրոպական համայնքի և իր անդամ պետությունների (Կոտոնու ԱԿԽ-ԵՀ) միջև գործընկերության համաձայնագրի կողմն է, սակայն անդամ պետություն չէ՝ չհակասելով 2-րդ հոդվածին կամ

գ) երրորդ երկիր, որը, ծագման անդամ պետության իրավասու մարմինների կարծիքով, սույն հոդվածի 2-րդ պարբերությամբ նշված չափորոշիչներին համապատասխան, ունի վարչական և տեխնիկական կարողություն և կարգավորող մարմինների կառուցվածք՝ անվտանգ կառավարելու համար ռադիոակտիվ թափոնը կամ աշխատած վառելիքը՝ Համատեղ կոնվենցիայով սահմանված կարգով: Այս հարցի վերաբերյալ կարծիք ձևավորելու համար անդամ պետությունները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն մյուս անդամ պետություններից ստացված ցանկացած համապատասխան տեղեկություն: Այս առումով անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին և Խորհրդատվական կոմիտեին, որն ստեղծվում է ամեն տարի 21-րդ հոդվածին համապատասխան:

2. Հանձնաժողովը, 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, սահմանում է չափորոշիչ՝ հաշվի առնելով, մասնավորապես, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության (ԱԷՄԳ) համապատասխան ստանդարտները՝ օգնելով անդամ պետություններին գնահատելու, թե արդյոք արտահանման պահանջները բավարարվել են, թե ոչ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17

Օրինակելի փաստաթղթի օգտագործումը

1. Օրինակելի փաստաթուղթը պետք է օգտագործվի սույն Հրահանգի շրջանակներում կարգավորվող բոլոր առաքումների ժամանակ:

2. Հանձնաժողովը պետք է, 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, մշակի օրինակելի փաստաթուղթ, որը հավելվածի տեսքով ներառում է հայտի պատշաճ լրացման պահանջները:

Օրինակելի փաստաթուղթը և դրա հավելվածները պետք է հրապարակվեն Եվրոպական միության պաշտոնական ամսագրում և էլեկտրոնային եղանակով մատչելի դարձվեն 2008 թվականի դեկտեմբերի 25-ից ոչ ուշ: Հարկ եղած դեպքում, այն պետք է թարմացվի նույն ընթացակարգով:

3. Թույլտվություն ստանալու համար ներկայացված հայտը պետք է լրացվի և 10-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածներում նշված ցանկացած լրացուցիչ փաստաթուղթ և տեղեկություններ տրամադրվում են այն անդամ պետության իրավասու մարմինների համար ընդունելի լեզվով, որին, սույն Հրահանգին համապատասխան, թույլտվություն ստանալու նպատակով հայտ է ներկայացվում:

Անձը պետք է, նշանակման վայրի կամ տարանցման իրավասու մարմինների պահանջով, իրենց ներկայացնի դրա վավերացված թարգմանությունը իրենց համար ընդունելի լեզվով:

4. Օրինակելի փաստաթղթում պետք է ներառվի ցանկացած լրացուցիչ պահանջ, որով թույլատրվում է առաքումը:

5. Չհակասելով այլ համապատասխան դրույթներով նախատեսված ցանկացած այլ ուղեկցող փաստաթղթերին՝ լրացված օրինակելի փաստաթուղթը, որը վկայում է, որ թույլտվության ընթացակարգը պատշաճ կերպով իրականացվել է, ուղեկցում է սույն հրահանգով կարգավորվող յուրաքանչյուր խմբաքանակին՝ ներառյալ այն դեպքերին, երբ թույլտվությունը մեկ փաստաթղթում տրվում է մեկից ավելի առաքումների համար:

6. Նշված փաստաթղթերը պետք է մատչելի դարձվեն ծագման և նշանակման վայրի ու տարանցման ցանկացած երկրի իրավասու մարմիններին:

Հոդված 18

Իրավասու մարմինները

1. Անդամ պետությունները 2008 թվականի դեկտեմբերի 25-ից ոչ ուշ Հանձնաժողովին են տրամադրում իրավասու մարմնի կամ իրավասու մարմինների անվանումը (անվանումները) և հասցեն (հասցեները) և բոլոր անհրաժեշտ տեղեկությունները նշված մարմինների հետ արագ կապ հաստատելու համար:
2. Անդամ պետությունները պետք է պարբերաբար Հանձնաժողովին տրամադրեն նշված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 19

Փոխանցումը

1. Հանձնաժողովը պետք է, 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, սահմանի առաջարկություններ սույն հրահանգի դրույթներին վերաբերող փաստաթղթերի և տեղեկությունների փոխանցման անվտանգ և արդյունավետ համակարգի համար:
2. Հանձնաժողովը պետք է ստեղծի և վարի էլեկտրոնային հաղորդակցության հարթակ՝ հրապարակելու համար՝
 - ա) յուրաքանչյուր անդամ պետության իրավասու մարմնի կամ մարմինների անվանումը (անվանումները) և հասցեն (հասցեները).
 - բ) յուրաքանչյուր անդամ պետության իրավասու մարմինների համար ընդունելի լեզուները և
 - գ) յուրաքանչյուր անդամ պետության իրավասու մարմինների՝ առաքումը թույլատրելու համար բոլոր ընդհանուր պայմանները և լրացուցիչ պահանջները, եթե այդպիսիք առկա են:

Հոդված 20

Պարբերաբար ներկայացվող զեկույցները

1. Մինչև 2011 թվականի դեկտեմբերի 25-ը և յուրաքանչյուր երեք տարին մեկ, անդամ պետությունները Հանձնաժողովին ներկայացնում են սույն հրահանգի կիրարկման մասին զեկույց:
2. Նշված զեկույցների հիման վրա Հանձնաժողովը, 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, Եվրոպական պառլամենտի, Խորհրդի և Տնտեսական ու սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի համար մշակում է ամփոփ զեկույց՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով 4-րդ հոդվածի իրականացմանը:

Հոդված 21

Խորհրդատվական կոմիտեն

1. 16(2), 17(2), 19(1) և 20(2) հոդվածներով սահմանված խնդիրներն իրականացնելիս Հանձնաժողովին պետք է աջակցի խորհրդատվական գործառույթներ իրականացնող կոմիտեն, որը բաղկացած է անդամ պետությունների ներկայացուցիչներից և նախագահում է Հանձնաժողովի ներկայացուցչի կողմից (այսուհետ՝ «Կոմիտե»):
2. Հանձնաժողովի ներկայացուցիչը պետք է կոմիտեին ներկայացնի ձեռնարկվելիք միջոցների նախագիծը: Կոմիտեն նախագծի վերաբերյալ պետք է տրամադրի իր եզրակացությունը նախագահի կողմից ըստ խնդրի հրատապության սահմանված ժամկետում, անհրաժեշտության դեպքում՝ քվեարկությամբ:
3. Եզրակացությունն արձանագրվում է: Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է պահանջել արձանագրել իր դիրքորոշումը:
4. Հանձնաժողովը պետք է հաշվի առնի Կոմիտեի եզրակացությունը: Այն պետք է տեղեկացնի Կոմիտեին իր եզրակացությունը հաշվի առնելու եղանակի մասին:

Հոդված 22

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական ակտեր նախքան 2008 թվականի դեկտեմբերի 25-ը: Նրանք անմիջապես այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից այդ ակտերն ընդունելիս դրանք պետք է հղում պարունակեն սույն հրահանգին, իսկ պաշտոնական հրապարակման դեպքում՝ ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են փոխանցում ազգային իրավունքի այն հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 23

Ուժը կորցրած ճանաչելը

1. 92/3/Եվրատոմ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի 2008 թվականի դեկտեմբերի 25-ից՝ չհակասելով անդամ պետությունների՝ ազգային իրավունքում փոխատեղելու և նշված հրահանգը կիրարկելու ժամկետներին վերաբերող անդամ պետությունների պարտավորություններին:

2. Ուժը կորցրած ճանաչված հրահանգին արված հղումները մեկնաբանվում են որպես սույն հրահանգին արված հղումներ և ընթերցվում են հավելվածով սահմանված համեմատական աղյուսակի համաձայն:

Հոդված 24

Անցումային դրույթներ

1. Եթե ծագման պետության իրավասու մարմինները պատշաճ կերպով հաստատել կամ նրանց են ներկայացվել թույլտվություն ստանալու հայտը մինչև 2008 թվականի

դեկտեմբերի 25-ը, ապա 92/3/Եվրատոմ հրահանգը կիրառվում է նույն թույլտվությամբ կարգավորվող բոլոր առաքումների նկատմամբ:

2. Ծագման անդամ պետությունը, երբ որոշում է կայացնում մինչև 2008 թվականի դեկտեմբերի 25-ը ներկայացված՝ ռադիոակտիվ թափոնի կամ աշխատած վառելիքի մեկից ավելի առաքման համար թույլտվություն տալու հայտերի վերաբերյալ, պետք է հաշվի առնի բոլոր անհրաժեշտ հանգամանքները և մասնավորապես՝

ա) նույն հայտում ներկայացված բոլոր առաքումներն իրականացնելու պլանավորվող ժամանակացույցը.

բ) նույն հայտում բոլոր առաքումներն ընդգրկելու հիմնավորումը.

գ) նպատակահարմարությունը թույլատրելու հայտում ներկայացված առաքումներից ավելի պակաս վտանգավոր մի շարք առաքումներ:

3. Մինչև սույն հրահանգի 17-րդ հոդվածով նախատեսված օրինակելի փաստաթղթի մատչելի լինելը Հանձնաժողովի 93/552/Եվրատոմ [7] որոշմամբ հաստատված օրինակելի փաստաթուղթը, համապատասխան փոփոխություններով, կօգտագործվի սույն հրահանգի իմաստով:

Հոդված 25

Ուժի մեջ մտնելը

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 26

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2006 թվականի նոյեմբերի 20-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Յ. Կորկեաոյա

[1] ՊՏ C 286, 17.11.2005թ., էջ 34

[2] 2006 թվականի հուլիսի 5-ին ներկայացված եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել).

[3] ՊՏ C 119, 22.05.2002թ., էջ 7:

[4] ՊՏ թիվ L 35, 12.02.1992թ., էջ 24:

[5] ՊՏ թիվ L 159, 29.06.1996թ., էջ 1:

[6] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

[7] Խորհրդի 92/3/Եվրատոմ հրահանգում նշված ռադիոակտիվ թափոնների առաքումն ստուգելու և վերահսկելու օրինակելի փաստաթուղթ մշակելու մասին Հանձնաժողովի 1993 թվականի հոկտեմբերի 1-ի 93/552/Եվրատոմ որոշում (ՊՏ L 268, 29.10.1993թ., էջ 83):

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

92/3/Եվրատոմ |Սույն հրահանգը|

1-ին հոդված | 1-ին հոդված |

2-րդ հոդված | 5-րդ հոդված |

3-րդ հոդված | առաջին հղում |

4-րդ հոդված, առաջին ենթապարբերություն, առաջին նախադասություն | հոդված 6(1) |

4-րդ հոդված, առաջին ենթապարբերություն, երկրորդ նախադասություն | հոդված 7(1) |

Հոդված 4(1), երկրորդ ենթապարբերություն | հոդված 17(1) |

4-րդ հոդված, երրորդ ենթապարբերություն | – |

Հոդված 5(1) | Հոդված 6(2) |

Հոդված 5(2) | Հոդված 10(4) |

Հոդված 6(1), առաջին ենթապարբերություն | հոդված 9(1) |

Հոդված 6(1), երկրորդ ենթապարբերություն | հոդված 17(1) |

Հոդված 6(2) | Հոդված 9(3) |

Հոդված 6(3) | հոդված 9(1), երկրորդ ենթապարբերություն |

Հոդված 6(4) | Հոդված 9(2) |

7-րդ հոդված, առաջին ենթապարբերություն | հոդված 10(1) |

Հոդված 7, երկրորդ ենթապարբերություն | հոդված 17(1) |

Հոդված 7, երրորդ ենթապարբերություն | հոդված 10(2) |

8-րդ հոդված | 17(5) հոդված |

Հոդված 9(1), նախադասության առաջին մաս | հոդված 11(1) |

Հոդված 9(1), նախադասության վերջին մաս | հոդված 17(1) |

Հոդված 9(2), առաջին նախադասություն | հոդված 11(2) |

Հոդված 9(2), երկրորդ նախադասություն | 11(3) հոդված |

Հոդված 10(1) | 13-րդ հոդված |

Հոդված 10(1), առաջին նախադասության վերջին մաս | հոդված 17(1) |

Հոդված 10(2) | 14-րդ հոդված |

Հոդված 10(3) | 13-րդ հոդված |

11-րդ հոդված | Հոդված 16(1) |

Հոդված 12(1) | Հոդված 15(1) |

Հոդված 12(2) | Հոդված 15(3) |

Հոդված 12(3) | Հոդված 10(2) |

Հոդված 12(4) | Հոդված 17(1) |

Հոդված 12(5), հոդված 15(4) | առաջին ենթապարբերություն |

Հոդված 12(6) | հոդված 15(4), երկրորդ ենթապարբերություն |

13-րդ հոդված | Հոդված 1(3) |

14-րդ հոդված | 2-րդ հոդված |

Հոդված 15(1) | Հոդված 12(2) |

Հոդված 15(2) | հոդված 13(1), երկրորդ ենթապարբերություն |

16-րդ հոդված | Հոդված 9(4) |

17-րդ հոդված | 18-րդ հոդված |

18-րդ հոդված | 20-րդ հոդված |

19-րդ հոդված | 21-րդ հոդված |

20-րդ հոդված (առաջին, երկրորդ և երրորդ պարբերություններ) | հոդված 17(1) |

20-րդ հոդված, չորրորդ պարբերությամբ | Հոդված 16(2) |

20-րդ հոդված, չորրորդ պարբերությամբ | Հոդված 20(2) |

21-րդ հոդված | 22-րդ հոդված |

22-րդ հոդված | 26-րդ հոդված |

| 3-րդ հոդված (նոր) |

| 4-րդ հոդված (նոր) |

| 8-րդ հոդված (նոր) |

| 19-րդ հոդված (նոր) |

| 23-րդ հոդված (նոր) |

| 24-րդ հոդված (նոր) |

| 25-րդ հոդված (նոր) |